Ձև N 2

Ց Ա Ն Կ

ՀՀ տարածքային կառավարման նախարարության
ջրային տնտեսության պետական կոմիտեի մասով 2014 թվականի գերակա խնդիրների

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը	Հղում
1	*2*	*3*	*4*
ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	*1.* Խմելու ջրի կայուն և հուսալի ջրամատակարարում, որակի ապահովում, ջրի կորուստների կրճատում, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում՝ նախորդ տարվա նկատմամբ առնվազն 1 ժամով, Սևանա լճի բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի վերանորոգում ու կառուցում, ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում, ինչպես նաև ջրամատակարար կազմակերպությունների կողմից չսպասարկվող բնակավայրերում ուսումնասիրությունների ավարտում և ներդրումային ծրագրերի նախապատրաստում:	- Վարկային, դրամաշնորհային, ինչպես նաև ջրամատակարար կազմակերպությունների սեփական միջոցների հաշվին ծրագրերի իրականացում:	ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 4-ի <<ՀՀ 2014-2016թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին>> N740-Ն որոշում:
ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	*2.* Ոռոգման համակարգերի վերականգնման ծրագրով շուրջ 50 կմ ոռոգման ջրանցքների վերականգնում:	--Համաշխարհային բանկի աջակցությամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող <<Ոռոգման համակարգերի բարելավում>> ծրագրի իրականացում:	ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 4-ի <<ՀՀ 2014-2016թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին>> N740-Ն որոշում:
ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	*3.* Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստում:	-միջազգային ֆինանասական կազմակերպությունների հետ նոր ներդրումային ծրագրերի համար բանակցությունների վարում:	<<ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին>> ՀՀ օրենք, (հոդված 29)